

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՏԻԿ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր*

Աշխարհի ուսումնասիրման, մտավոր ըմբռնման և բացահայտման էվոլյուցիայում դիցաբանությունից սերված առաջին ռացիոնալ համակարգը փիլիսոփայությունն է: Փիլիսոփայության էությունը «մարդ-աշխարհ» համակարգում առկա համընդհանուր հիմնախնդիրների շուրջ խորհրդածելն է¹: Փիլիսոփայական դպրոցները ձևավորվել են քաղաքակրթության հնագույն օրրաններում՝ Հին Հինաստանում, Հին Հնդկաստանում, Հռոմում և առավել կատարյալ ձևով դրսևորվել Հին Հունաստանում²: Փիլիսոփայական գիտելիքներն ունեն համընդգրկուն բնույթ:

Անտիկ աշխարհում ձևավորված փիլիսոփայական հայացքներում, ի թիվս այլ հասկացությունների, կարևորվում էին իրավական կատեգորիաները:

Դեռևս մ.թ.ա. II հազարամյակում Հունաստանում սահմանվում էին ճշմարտությունն ու արդարությունը (**դիկե**), սովորույթն ու սովորությանին իրավունքը (**թեմիս**), պատիվը, պատիվ պահանջելը (**տիմե**), օրենքը (**նոմոս**)³:

Գիտության մեջ հնագույն փիլիսոփայության, այդ թվում՝ իրավափիլիսոփայական հայացքների զարգացման ընթացքը բաժանվում է երեք հիմնական փուլի:

1. Բնափիլիսոփայական կամ վաղ դասական փուլ, որը ներառում է փիլիսոփայական մտածողության առաջացման շրջանը՝ սկսած մ.թ.ա. VII դարից մինչև Սոկրատեսի ժամանակաշրջանը (մ.թ.ա. V դարի վերջ):

2. Դասական փուլ, որը ներառում է հելլենական մշակույթի մեծագույն նվաճումները: Դասական փուլի հիմնադիրներն էին Սոկրատեսը և նրա ժամանակակից սովետները (Պրոտագորասը, Գորգիասը): Նշված շրջանի և ողջ անտիկ փիլիսոփայության զարգացման գագաթնակետը նշանավորեցին Պլատոնի և Արիստոտելի ստեղծագործությունները:

3. Ուշ դասական փուլ, որը կապված է հելլենիզմի և Հռոմեական կայսրության դարաշրջանի հետ: Այն սկսվում է մ.թ.ա. IV դարավերջից և ձգվում մինչև անտիկ աշխարհի ավարտը (մ.թ. IV դար): Դա հելլենական-հռոմեական փիլիսոփայական հայացքների ժամանակաշրջանն էր, որի վառ ներկայացուցիչներն էին էպիկուրականները՝ էպիկուրի գլխավորությամբ, սկեպտիկները

¹ Տե՛ս **Алексеев П. В., Панин А. В.**, Философия, Учебник, М., 1996, էջ 4:

² Տե՛ս **Շաքարյան Հր.**, Փիլիսոփայություն (Ուսումնական ձեռնարկ), Երևան, 2005, էջ 47:

³ Տե՛ս **Нерсисянц В. С.**, Философия права, Учебник для вузов, М., 2003, էջ 399:

(Պիրրոն և այլք), ստոիկները (Զենոն, Ցիցերոն, Սենեկա, Էպիկտետ, Մարկոս Ավրելիոս Անտոնինոս)⁴:

Հատկանշական է, որ հելլենական քաղաքակրթությունում իրավունք էր համարվում միայն այն, ինչ արդարացի էր: **Սոլոնն իր օրենքներով** (մ. թ. ա. 594 թ.) Աթենքում հաստատեց չափավոր ժողովրդավարություն, ընդունեց վերնախավի և **դեմոսի** (ժողովրդի), հարուստների և աղքատների փոխգործակցության գաղափարը, չեղյալ համարեց նախորդ պարտքերը, վերացրեց պարտքի դիմաց ստրկացման իրավունքը: Սոլոնն իր էլլեգիաներում գրում է, որ «ինքը բարեփոխումներ իրականացրեց օրենքի իշխանությամբ, իրավունքն ուժի հետ համադրելով: Բոլորին ցույց տվեց իրական ճշմարտությունը և օրենքներ սահմանեց հասարակ մարդուն տոհմիկ անձի հետ համահավասար ձևով»: Սոլոնն օրենքն ընդունում էր որպես «իրավունքի և ուժի համակցություն»: Օրենքները գրված են բոլորի համար և օրենքի իշխանությունը համապարտադիր է (տարածվում է բոլորի նկատմամբ)⁵:

Իրավունքի և արդարության որոնումներով էին զբաղված **Պյութագորասականները** (մ. թ. ա. VI-V դարեր): Պյութագորասը և նրա հետևորդներն ունեին բնաիրավական հայացքներ, կարևորում էին իրավական հավասարությունը, պետական ճշգրիտ կառուցվածքը, օրենքները, արդարությունն ու արդարադատությունը, չարիք էին համարում անարիսիան և անօրինականությունը⁶:

Համաշխարհային զարգացման օբյեկտիվ օրինաչափություններին էին նվիրված **Հերակլիտի** աշխատությունները (մոտավորապես մ.թ.ա. 530-470 թթ.): Ըստ նրա՝ պոլիսի (քաղաք-պետության) օրենքները տիեզերական կարգի արտացոլումն են: Եվ ընդհանրապես, մարդկային հասարակության ողջ գործունեությունը կապված է գլոբալ երևույթների, տիեզերական գործընթացների հետ: Նա պետության օրենքների աղբյուր էր համարում Աստվածային օրենքը կամ **լոգոսը**՝ բանականությունը, բնությունը, բնական անխափան ներդաշնակությունը: Հերակլիտը նույնացնում էր Զևսին, Լոգոսին և հավերժական կրակը⁷:

Իրավունքի փիլիսոփայության զարգացման գործում մեծ է ատոմիստ-փիլիսոփա **Դեմոկրիտի** (մոտավորապես մ.թ.ա 470-366 թթ.) դերը: Դեմոկրիտը պոլիսը և նրա օրենքները չէր դիտարկում որպես բնական երևույթներ, այլ որպես մարդկային հասարակության ստեղծած ինստիտուտներ՝ համայնքային (տոհմային) կյանքից դեպի քաղաքակրթություն անցում կատարելիս: Ըստ Դե-

⁴ Ст'ю Философия права, Учебник, Под ред. О. Г. Данильяна, М., 2005, тг 76:

⁵ Ст'ю **Нерсесянц В. С.**, Философия права, Учебник для вузов, М., 2003, тг 400-401:

⁶ Ст'ю Философия права, Учебник, Под ред. О. Г. Данильяна, М., 2005, тг 77:

⁷ Ст'ю **Нерсесянц В. С.**, Философия права, Учебник для вузов, М., 2003, тг 402:

մոկրիտի՝ էթիկայի, քաղաքականության և օրենսդրության մեջ արդարության չափանիշը համապատասխանությունն է բնությանը: Նա գտնում էր, որ բնության մեջ գոյություն ունեն ատոմներ և դատարկություն, որ «բնական իրավունքը» արդարությունն է, իսկ մարդկության ստեղծած «արհեստական» իրավունքը օրենքներն են⁸:

Մ.թ.ա. V-IV դարերում իրավունքի բնական ծագման և օրենքների, արդարության ու ճշմարտության հիմնախնդիրները գտնվել են **սոփեստների** ուշադրության կենտրոնում: Սոփեստները ապահովեցին փիլիսոփայության, տրամաբանության, էթիկայի, հռետորաբանության, քաղաքագիտության, մարդկային իմացության այլ ոլորտների զարգացումը: Նախկինում ուսումնասիրվում էին «իրերի բնական օբյեկտիվ» բնույթը՝ շրջանցելով մարդուն, նրա ստեղծագործական ակտիվ դերը, կեցության ու մտածողության սուբյեկտիվ գործոնը, մարդկային իմացության և գործունեության սոցիալական դերն ու նշանակությունը: Այս առումով կարևորվում է անցումը օբյեկտիվ-աստվածայինից դեպի սուբյեկտիվ մարդը: Սոփեստների հիմնարար սկզբունքներից մեկը ձևակերպել է **Պրոտագորասը** (մոտավորապես մ.թ.ա. 481-411 թթ.), ըստ որի «**Բոլոր առարկաների չափը մարդն է**»⁹: Այսպիսով՝ սոփեստները որպես չափ ու մասշտաբ ընդունում էին ոչ թե աստվածային սկիզբը, այլ մարդկայինը: Նրանք տարբերակում էին գրված օրենքները չգրված արդարությունից և գտնում էին, որ օրենքները պետք է համապատասխանեն չգրված արդարությանը, այսինքն՝ բնական իրավունքին: Նրանք հիմնավորում էին, որ օրենքները պայմանական են, փոփոխական, ընթացիկ և ժամանակավոր բնույթ ունեն, իսկ բնական իրավունքը մնայուն է, ընդհանուր բոլորի համար և մշտական՝ բոլոր ժամանակներում: Մարդիկ իրենց ծագմամբ և բնությամբ (բնությունից) ազատ են ու իրավահավասար, սակայն նրանց անհավասար են դարձնում օրենքները:

Անտիկ աշխարհի իրավունքի փիլիսոփայության վառ ներկայացուցիչ է **Սոկրատեսը** (մ.թ.ա. 469-399 թթ.): Նա արդարության, բարեգործության, բարոյականության հիմք ու աղբյուր էր համարում գիտելիքը: Ըստ Սոկրատեսի՝ հասարակության ու պետության կարևոր նվաճում է ազատությունը, որը հնարավոր ու իրական է դառնում միայն խելամիտ ու արդարացի օրենքներ ընդունելու և կիրառելու դեպքում: Իրավական, քաղաքական և բարոյական հիմնախնդիրների փիլիսոփայական քննարկումը Սոկրատեսը բարձրացրեց տրամաբանական դեֆինիցիաների (սահմանումների) և հասկացությունների աստիճանի՝ հիմք դնելով տեսական հետազոտություններին¹⁰: Այս առումով Սոկրատես-

⁸ Նույն տեղում, էջ 403-404:

⁹ Նույն տեղում, էջ 405:

¹⁰ См и Философия права, Учебник, Под ред. О. Г. Данильяна, М., 2005, էջ 79-80:

սի ընդհանուր-փիլիսոփայական և իրավափիլիսոփայական ժառանգության ընդունողներն ու նրա արժանի հետնորդներն էին Պլատոնը և Արիստոտելը: Սոկրատեսի աշակերտ **Պլատոնը** (մ.թ.ա. 427-347 թթ.) «Օրենքներ» աշխատությունում գրում է. «Ես տեսնում եմ այն պետության մոտալուտ կործանումը, որտեղ օրենքն ուժ չունի և գտնվում է ինչ-որ մեկի իշխանության ներքո: Իսկ այնտեղ, որտեղ իշխում է օրենքը և տիրակալները նույնպես օրենքի ստրուկն են, ես տեսնում եմ պետության փրկությունը և բոլոր այն բարիքները, որ կարող են Աստվածները շնորհել պետություններին»: **Պլատոնը օրենքը բնորոշում էր որպես «բանականության սահմանում», որոնց պետք է հետևեն բոլոր մարդիկ պետության մեջ և՛ իրենց տանը, և՛ հանրային, և՛ մասնավոր գործերում¹¹:**

Պլատոնից հետո իրավունքի և օրենքի ռացիոնալ-տեսական վերլուծությունը կատարել և նրանց սոցիալ-քաղաքական բնույթը վերլուծել է **Արիստոտելը** (մ.թ.ա. 384-322 թթ.)¹²: Արիստոտելը մշակել է քաղաքականության, էթիկայի, իրավունքի մասին ուսմունքների փիլիսոփայական հիմքերը: Նա ուսումնասիրել է «արդարություն» հասկացությունը՝ տարբեր տեսանկյուններից: «Գնալ դատարան,-գրում է Արիստոտելը,- նշանակում է դիմել արդարությանը, քանի որ դատավորը պետք է լինի արդարության մարմնացումը»: Նա գտնում է, որ քաղաքական արդարությունը հնարավոր է միայն ազատ և հավասար մարդկանց միջև: Օրենքը, որը քաղաքական երևույթ է և համապատասխանում է քաղաքական արդարության սկզբունքին, չի կարող բռնությունը դարձնել իրավունք կամ ուժը ճանաչել որպես իրավունքի աղբյուր: Արիստոտելը անդրադառնում է գրված իրավունքին (օրենքներին, պոզիտիվ, կամասսահման իրավունքին) և չգրված (բնական) իրավունքին, արդարությանը, հավասարությանը, ազատությանը: Ըստ նրա՝ ազատության, ազատ մարդկանց շփման ձևեր են պետությունը (քաղաքական համակարգը) և իրավունքը:

Արիստոտելը չի ընդունում Պլատոնի համայնավարական հայացքները գույքի, ողջ ունեցվածքի, երեխաների ընդհանրության մասին, ինչը պետք է հանգեցնի պետության ոչնչացմանը:

Այսինքն, Պլատոնի հայացքներում կարելի է նշմարել համայնավարական տեսության սաղմերը: Արիստոտելը, ի տարբերություն Պլատոնի, պաշտպանում է անհատի և ընտանիքի իրավունքները, մասնավոր սեփականությունը: Պլատոնը գտնում է, որ մասնավոր սեփականության իրավունքը անհատի բնական իրավունքն է, որը համապատասխանում է մարդու բնույթին: Նա համարում է, որ անձը պետք է ունենա մասնավոր սեփականություն, որի պտուղ-

¹¹ Նույն տեղում, էջ 80-82:

¹² См. у **Нерсисянц В. С.**, Философия права, Учебник для вузов, М., 2003, էջ 412-421:

ներից պետք է օգտվեն բոլորը: Ըստ Արիստոտելի՝ **պետք է կառավարեն օրենքները և ոչ թե մարդիկ**, քանի որ «Օրենքը հավասարակշռված բանականությունն է»: Օրենքը բանական է (խելամիտ), եթե ճշմարիտ է, իրավաչափ և համապատասխանում է քաղաքական արդարությանն ու իրավունքի գաղափարին կամ բնական իրավունքին: Արիստոտելը գտնում էր, որ բնական իրավունքը խելամիտ և արդարացի իրավունքն է, որը հավասարաչափ վերաբերում է բոլորին և պարտադիր է բոլորի համար¹³:

Իրավունքի՝ որպես համընդհանուր օգտակար և մարդկանց անձնական ազատությունն ու ընդհանուր անվտանգությունն ապահովող հասարակական-քաղաքական պայմանագրի մասին հայեցակարգը Յելլենիզմի դարաշրջանում զարգացրել է **Էպիկուրը** (մ.թ.ա. 341-270 թթ.): Էպիկուրյան էթիկայի հիմնական արժեքներն են ազատությունը, բավականությունը, «ատարաքսիան», այսինքն՝ հոգու անվրդով խաղաղությունը: Մարդու ազատությունը, ըստ Էպիկուրի, «իր կենսակերպի խելամիտ ընտրության պատասխանատվությունն է»: «Մարդկային ազատության ոլորտը իր համար անձի պատասխանատվության ոլորտն է, այն վեր է պատահականություններից և անհրաժեշտությունից դուրս է, քանի որ անհրաժեշտությունը պատասխանատվության ենթակա չէ»: «Ազատությունը ձեռք է բերվում շնորհիվ պարզաբանման, թե ինչ կարող ենք մենք անել՝ անկախ որևէ տիրակալի»: Պետության հիմնական նպատակը մարդկանց փոխադարձ վախի հաղթահարումն է և ընդհանուր անվտանգության ապահովումը: Ըստ Էպիկուրի՝ պետությունը և իրավունքը գոյություն չունեն բնության մեջ, ստեղծված չեն բնական օրինաչափություններով կամ շնորհիվ չեն Աստծո կողմից, այլ մարդկանց ինքնորոշման արդյունք են, համաձայնություն, «պայմանագիր» մարդկանց միջև՝ ընդհանուր անվտանգություն ապահովելու նպատակով¹⁴: Արդարությունը նա համարում է բնական իրավունք՝ փոփոխվող բովանդակությամբ, պայմանավորված մարդկանց պրակտիկ գործունեությամբ ու պահանջներով: Արդարությանը համապատասխանող օրենքները անհատների ազատության, անվտանգության և ինքնավարության (ավտոնոմիայի) հրապարակային երաշխիք են: Պետության և իրավունքի էպիկուրյան պայմանագրային մեկնաբանությունը ենթադրում է պայմանագրի կողմ հանդիսացող անձանց հավասարություն, ազատություն և անկախություն, և ըստ էության հանդիսանում է ազատականության (լիբերալիզմի) և ազատական (լիբերալ) ինդիվիդուալիզմի (անհատապաշտության) առաջին փիլիսոփայական-իրավական հայեցակարգը¹⁵:

¹³ Ст'ю Философия права, Учебник, Под ред. О. Г. Данильяна, М., 2005, էջ 82-86:

¹⁴ Նույն տեղում, էջ 86:

¹⁵ Ст'ю **Нерсисянц В. С.**, Философия права, Учебник для вузов, М., 2003, էջ 421-423:

Իսկ բնական իրավունքի ճակատագրապաշտական (ֆատալիստական) հայեցակարգի տարբերակները զարգացրել են հին հույն և հռոմեացի **ստոիկները**: ճակատագիրը, ըստ նրանց, տնօրինող սկիզբ է (hegem-onikon), միաժամանակ, աշխարհաստեղծ միտք կամ համընդհանուր օրենք, «բնական օրենք», որն ունի աստվածային բնույթ և իմաստ: Համաձայն ստոիցիզմի հիմնադիր **Ջենոնի**՝ «Բնական օրենքը աստվածային է և ունի ուժ՝ հարկադրելու գործել ճիշտ և արգելելու սխալ վարքագիծը»¹⁶: Ըստ ստոիկների՝ մարդը բնության և ընդհանուր աշխարհակարգի մի մասն է, ուստի մարդը պետք է հաշտ ու համերաշխ ապրի բնության հետ, այսինքն՝ լինի ազնիվ ու բարեգործ, խելամիտ ու շիտակ, ընդհանուր բնական օրենքի համաձայն: Մարդը պետք է ապրի իր բնությոն և բնության օրենքին համապատասխան: Ջենոնի հետնորդներն էին **խրիսիպպը, Դիոգենես Լաերթացին, Սենեկան, Մարկոս Ավրելիոս Անտոնինոսը, Էպիկտետը, Պլուտարքոսը**, որոնք հիմնադրեցին կոսմոպոլիտիզմի (աշխարհաքաղաքացիության) տեսությունն առ այն, որ բոլոր մարդիկ միասնական համաշխարհային տերության քաղաքացիներն են, տիեզերքի քաղաքացիներ¹⁷: Նրանք չէին ընդունում ստրկությունը, մարդկանց իրավազրկությունը: Ըստ **Սենեկայի**՝ տիեզերքը բնական պետություն է, իր բնական իրավունքով: Իսկ «բնական իրավունքը» կամ «բնական օրենքը», ըստ ստոիկների, «ճակատագրի օրենքն» է¹⁸: Բոլոր մարդիկ հավասար են և պետք է բարեխիղճ ձևով կատարեն այն դերը, որ նրանց վերապահված է ճակատագրով և համաշխարհային օրենքով: Նրանք պաշտպանում էին հետևյալ բնաիրավական, փիլիսոփայական սկզբունքը՝ «Մի արա ուրիշին այն, ինչ չես ցանկանա քեզ»: Ըստ նրանց՝ մարդկային (պետական) օրենքները պետք է համապատասխանեն ընդհանուր օրենքին (բնական իրավունքին): Ընդհանուր, համաշխարհային օրենքի (բնական իրավունքի) ճակատագրական բնույթը կանխորոշում է բոլոր մարդկային հարաբերությունները, իրավաքաղաքական երևույթները, այդ թվում՝ պետական օրենսդրությունը: **Ստոիկների հայացքներն իրենց ազդեցությունը թողեցին Պուլիքիոսի, Ցիցերոնի, հռոմեացի իրավաբանների, վաղ քրիստոնեական շրջանի հեղինակների հայացքների վրա**: Բնական իրավունքի դիրքերից իրավունքի, օրենքի և պետության մասին ուսմունքը հիմնավորապես մշակել է **Ցիցերոնը** (մ.թ.ա. 106-43 թթ.)¹⁹: Ըստ նրա՝ իրավունքի հիմքում արդարությունն է՝ որպես ընդհանուր առմամբ բնության և, մասնավորապես, մարդկային բնությանը բնորոշ մշտական, ան-

¹⁶ Նույն տեղում, էջ 424:

¹⁷ Տե՛ս Философия права, Учебник, Под ред. О. Г. Данильяна, М., 2005, էջ 87-89:

¹⁸ Նույն տեղում, էջ 88:

¹⁹ Ցիցերոնի մասին մանրամասն տե՛ս **Нерсисянц В. С.**, Философия права, Учебник для вузов, М., 2003, էջ 426-430:

փոփոխ և անօտարելի հատկանիշ: Բնությունը արդարության և իրավունքի (բնական իրավունքի) աղբյուրն է: Արդարությունը այն է, երբ բոլորին հատուցվում է ըստ արժանվույն և պահպանվում է հավասարությունը բոլորի միջև:

Խոսքը վերաբերում է ոչ թե փաստական, գույքային հավասարությանը, այլ հենց իրավահավասարությանը: Ցիցերոնը պաշտպանում է մասնավոր սեփականության իրավունքը և կապ է տեսնում պետության ու սեփականության միջև՝ գտնելով, որ պետության ստեղծման պատճառը սեփականության պահպանման անհրաժեշտությունն է: Մասնավոր և պետական սեփականության դեմ ոտնձգությունը Ցիցերոնը համարում է սրբապղծություն և արդարության ու իրավունքի խախտում: Ըստ նրա՝ բնական իրավունքը բարձրագույն և ճշմարիտ օրենքն է, որը գոյություն է ունեցել նախքան պետության և գրված օրենքների ի հայտ գալը: Պետությունը «իրավական համակեցություն է, ընդհանուր իրավակարգ՝ իր կարգով և օրենքներով»: Իսկ օրենքներն իրենց ազդեցությունը պետք է տարածեն բոլորի վրա: Ցիցերոնի աշխատություններում իրավունքը բաժանվում է մասնավոր իրավունքի և հանրային իրավունքի: «Ժողովուրդների իրավունքը» նա մեկնաբանում է որպես միջազգային բնական իրավունք:

Իրավագիտությունը՝ որպես ինքնուրույն գիտություն հին հռոմեացիների նվաճումն է մ.թ.ա. III դարում: Հռոմեացի իրավաբանները մշակեցին ոչ միայն իրավունքի ընդհանուր տեսությունը, այլև իրավունքի առանձին ճյուղեր՝ քաղաքացիական իրավունք, պետական իրավունք, վարչական իրավունք, քրեական իրավունք, միջազգային իրավունք և այլն: Ըստ հռոմեացի իրավաբանների՝ իրավունքը հենց արդարությունն է²⁰: **Հռոմեացի հայտնի հինգ իրավաբաններն էին Գայոսը, Պապինիանը, Պավելը, Ուլփիանոսը, Մոդեստինը**, ովքեր ունեին «jus respondentii», այսինքն՝ Կայսեր անունից պատասխաններ տալու և մեկնաբանություններ կատարելու իրավունք²¹: Նրանց տված պատասխաններին ու ձևակերպած դրույթներին Կայսեր հատուկ օրենքով տրվեց օրինական ուժ և պարտադիր համարվեց բոլորի, այդ թվում՝ դատարանների համար: Հռոմեացի իրավաբանների, ինչպես նաև առավել շատ ցիտվող հեղինակների՝ **Սաբինի, Սցուլայի, Յուլիանի, Ֆլորենտինի և Մարցիանի** աշխատությունները մաս կազմեցին **Յուստինիանոսի կոդիֆիկացիային** (Corpus juris civilis), որը ներառում էր.

1. Ինստիտուցիաներ, այսինքն՝ հռոմեական դասական իրավունքի հիմունքները:

²⁰ Իրավունքը «jus» եզրույթն է, որը ծագել է justicia՝ «արդարություն» հասկացությունից:

²¹ Հռոմեացի իրավաբանների մասին մանրամասն տե՛ս **Нерсесянц В. С.,** Философия права, Учебник для вузов, М., 2003, էջ 430-438:

2. Դիզեստներ կամ պանդեկտներ, այսինքն՝ 38 հռոմեացի իրավաբանների աշխատություններից «Ժաղկաքաղեր»,

3. Յուստինիանոսի օրենսգիրքը (կայսերական սահմանադրությունների ժողովածու)²²:

Կողիֆիկացիոն աշխատանքները ղեկավարել է VI դարի ճանաչված իրավաբան **Տրիբոնիանը**: Հռոմեացի իրավաբանները իրավունքի ողջ համակարգը բաժանեցին երկու մասի՝ հանրային իրավունքի (jus publicum) և մասնավոր իրավունքի (jus privatum):

Ըստ **Ուլպիանոսի**՝ հանրային իրավունքը վերաբերում է հռոմեական պետությանը, իսկ մասնավոր իրավունքը՝ առանձին անձանց շահերին: Իր հերթին, մասնավոր իրավունքը բաժանվում էր 3 մասի՝

1) բնական իրավունք (jus naturae, jus naturale),

2) ժողովուրդների իրավունք (jus gentium)

3) քաղաքացիական իրավունք - ցիվիլիստական իրավունք (jus civile)²³:

Ուլպիանոսը բնական իրավունքի ինստիտուտ է համարում ամուսնությունը և երեխաների դաստիարակությունը, որը բնորոշ է ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին, այն համարվում է անգամ վայրի գազանների բնական իրավունք:

Ժողովուրդների իրավունքը ևս համարվում էր բնական բնույթ ու ծագում ունեցող և ժողովուրդներին վերաբերող իրավունք:

Իսկ քաղաքացիական (ցիվիլիստական) իրավունքը նույնացվում էր բուն հռոմեական իրավունքի հետ, որի աղբյուրներն էին սովորության իրավունքը, օրենքը (lex), պլեբիսցիտը (ժողովրդական հարցում), սենատի որոշումը, իրավաբանների ստեղծած իրավունքը, պրետորական իրավունքը (եղիկտները), կայսեր հրամանները:

Այսպիսով՝ անտիկ բնափիլիսոփաները ձևավորեցին բնաիրավական փիլիսոփայության հիմքերը, ուստի կարող ենք եզրակացնել, որ անտիկ աշխարհի փիլիսոփայությունը անջնջելի հետք է թողել իրավունքի պատմության մեջ և իրավագիտության ու իրավունքի փիլիսոփայության ձևավորման գործում:

Բանալի բառեր - *իրավունք, փիլիսոփայություն, աշխարհըմբռնում, իրավահայեցողություն, սովորույթ, արդարություն, օրենք, բարոյականություն, ազատություն, պարտականություն*

²² См. у **Нерсисянц В. С.**, Философия права, Учебник для вузов, М., 2003, էջ 431:

²³ Նույն տեղում, էջ 432:

PHILOSOPHY OF LAW IN THE ANCIENT WORLD

R. KH. HAKOBYAN

*Doctor of Law, Associate Professor,
Rector of Gavar State University*

This article is devoted to the ancient views on philosophy which emphasized the importance of legal concepts.

It is noted that even in the second millennium BC, the definitions of truth and justice (*dikē*), custom and customary law (*themis*), honour, honour claims (*tSmU*), law (*nomos*) were given in Greece. Within Hellenic civilization, only what was fair was considered as law.

The article briefly presents philosophical and legal views of Solon, Pythagoras, Heraclitus, Democritus, sophists, Socrates, Plato, Aristotle, Epicurus, stoic philosophers, Seneca, and the Roman lawyers. It mentions that the ancient world philosophy left an indelible mark in the history of law, the development of legal science and philosophy of law.

ФИЛОСОФИЯ ПРАВА В АНТИЧНОМ МИРЕ

Р. Х. АКОПЯН

*Доктор юридических наук, доцент,
ректор Гаварского государственного университета*

Статья посвящена философским взглядам, сформировавшимся в античном мире, в которых важное место отводилось правовым категориям. Отмечается, что еще во II тысячелетии до н. э. В Греции определялись правда и справедливость (*дике*), обычай и право обычая (*темис*), честь, требование чести (*тима*), закон (*номос*). В эллинистической цивилизации правом считалось только то, что было справедливым. Кратко представлены философско-правовые взгляды Солона, Пифагора, Гераклита, Демокрита, софистов, Сократа, Платона, Аристотеля, Эпикура, стоиков, Сенеки, римских юристов.

Отмечается, что философия античного мира оставила неизгладимый след в истории права, а также в процессе формирования правоведения и философии права.